

# ՃԱՇԱԿ ՈՍԿԵՎՀՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՃԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՅՈՒԴ.

Ը. ՄԱՅՐԱԹԻԾ ԿԸՐԵՎԱՆԵԼՆ ԵԿ Յ. ԳՈՒՐԳԵՂԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻՒ Բ. ԵԿ Ժ. — 1 ԱԵՊՏԵՄԲԵՐ ԵԿ ՀՈԿՏԵՄԲԵՐ




Ի. Կ. ՊՈԼԻՍ

ՎԱ ՅՈՒ ՅԵՒ ԳՈՎԱՅԻՆ

1887

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



### ՊԱՏՄԱԿԱՆ


Պատմութիւն Հայ մատենագրութեան . . . . . Ա. Մ. Գ.  
Քննական պատմութիւն Հայոց . . . . . Ա. Մ. Գ.

### ԳԻՏԵԱԿԱՆ

Ընթացք Եւ յառաջադիմութիւն Բնախօսութեան . . . . Յ. Գ.

### ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆ

Բանք զՀայ լեզուէ . . . . . . . . . . . . . . . . . Պ. թ.  
Օրհնութիւն Մովսիսի . . . . . . . . . . . . . . . . . Յ. Գ.  
Թարգմանութիւն ընտիր հատածոց . . . . . . . . . . . Յ. Գ.  
Առանձինն բանք Հայերէն լեզուի (Դ) . . . . . . . . . . . Յ. Գ.



# ՃԱՇԱԿ

ՊԱԿԱՎԱԿՆ ԴՊՐԱԽԹԱՅՄԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶԲՈՒՆԵ ԱՆՏԻ ՄԻՒՉԵՒԻ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴԻ Ե. ԴԱՐՈՒ

« Անդ անկանէր ի չարաշար տանջանս , զի ամենայն ոսկերքն առհասարակ խորտակէին , և այն որ այն ինչ կամէք ի վերաց ալեաց ծովու սաստել վասն անօրէն հպարտութեանն , և զվերին լերանցն ներքին առնել , և զներքինն՝ վերին , զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ շրջեցուցանէին : Յայտնապէս Աստուծոյ զօրութիւնն երեւէր , մինչեւ յաչաց անտի անօրինին եռանդն որդանց բղխեալ սորսորել , և առ կենդանութեամբ իւրով տխտին ցաւոց զանդամն նորա ի միմեանց յօշել , և ի նեխոյն հոտոյ զօրացն ամենայնի նեղել տագնապաւ : Եւ զնա որ յառաջն հպարտացեալ մոռօք զաստելով երկնից ամփոփել համարէր՝ այսր անդր շրջըջել ոչ ոք կարէր վասն նեխոյն հոտոյ տագնապի : Յայնով վայրի սկսաւ բեկանել ի հպարտ յամբարտաւան խստութենէ անտի , և ի միտս իւր իջանէր առ տանջանացն , զի և ինքն իսկ ոչ կարէր ժոյժ ունել ի նեխոյ հոտոյ անտի : Ակսաւ խօսել այսպէս . ‘Պարտ և պատշաճ է հնազանդ լինել Տեառն Աստուծոյ , և մի ի մարմինս մահկանացուս աստուածակերպ օրինակ բարձրանալ : ’ Աղաչէր , ուխտս դնէր առ այն որ չէր նմա ողօրմելոց : ‘Փոխանակ զսուրբ քաղաքն հարթյատակ և անմարդի կացուցանելոյ՝ զայն մարդաշատ և ազատ ցուցանել (խոստանայր) . զՆերբայեցիսն որոց սպառնայր ոչ պատահաց և ոչ թաղելոց արժանի առնել , այլ կանամբք և մանկըտով ի հաւակերի դնել , դաղանաբեկս առնել , զնոսա քաղաքակիցս իւր , հաւասարս Աթենացոց գրով և մուրհակօք

կացուցանել . և զտաճարն սուրբ զոր յառաջ սպառնայր կապուտ կողոպուտ թողովակ՝ գեղեցիկ պատարագօք զարդարել , և զղարդ և զսալս տաճարին որ յառաջ անտի տարեալ իցէ՝ բազմապատիկ անդրէն դարձուցանել , և գկարգս մտից պատարագաց յարքունուստ լնուլ , և ի վերայ այսր ամենայնի Հերայեցի եւս լինել , և յամենայն մարդաշէն տեղիս հասանել պատմել զզօրութիւն մեծութեանցն Աստուծոյ : Իբրեւ ոչինչ էր հնար ցաւոցն դադարել , զի հասեալ էր ի վերայ նորա պատուհասն ի Տեառնէ արդար դատաստանաւ , և ակն ինչ ոչ կալաւ այնուհետեւ ապրելոյ իւրոյ , հրովարտակս առնէր առ Եբրայեցիսն մեծաւ խոնարհութեամբ օրինակաւս այսուիկ . Առ քաղցր Հեբրայեցիս , առ ընկերս , եղբարս , քաղաքակիցս , ողջոյն յոյժ . Շնորհ յոյժ ունիմ վասն ձեր յԱստուծոյ , և ես ի տկարութեան իմում , յանհնարին հիւանդութեան , մեծաւ գթով յիշեցի զձեզ : Դարձեալ եմ ես ի կողմանց Պարսից , և անկայ ի հիւանդութիւն դժուարին , և այսպէս լաւ համարեցայ ի մոլի իմում վասն օդտի հասարակաց և շինութեան : Եւ իմ ոչ եթէ յոյս ինչ հատեալ է վասն կենաց , այլ ակն ունիմ ապրել ի դժուարին հիւանդութեանէ աստի : Բայ հայեցայ ես շուրջ զմեւք ի մերձաւորս արքայութեան մերոյ որ ընդ ակամբ հային ի մեզ , և յայտ արարի զորդի իմ զԱնտիոքոս ի տեղի իմ ի թագաւորութեան : Բազում անգամ իբրեւ չու արարեալ իմ գնայի ի վերին կողմանս , բազմաց ի ձէնջ յանձն արարեալ և ի ձեռն եղեալ երթայի : Արդ աղաչէմ զձեզ յիշել ձեզ զերախտիս բարեաց և զսէր և զօգուտ առ իւրաքանչիւր , և պահել ընդ իս զհաւանութիւն միաբանութեան և առ որդիկ իմ : Եւ մարդախոշոշն , անօրէն հայկոյիչն զայս օրինակ անկեալ կործանեալ սատակամահ լինէր , յօտար լերինս չարաչար տանջանօք զոր ընդ այլ անցոյց՝ կարծէր ի կենաց :

### ՊԱՏԵՐԱԶՄՆ ՑՈՒԴԱՅ ԸՆԴ ԱՆՏԻՔԱՑ

« Խաղաց գնաց Յուդա ի միջնարերդ ամրոցէ անտի , և եկն բանակեցաւ դէմ յանդիման բանակի արքային : Կանինեաց ընդ առաւօտն թագաւորն , և զզօրսն սփուեաց ճա-

կատեցոյց ի մարտ պատերազմի : Փող հարին , կազմեցին պատրաստեցին զիիխզն , ճաշակեցուցին յարիւն խաղողոյ , ի զմուռս և ի գինիս : Եւ կարգեցան բաշխեցան ի գունդս գունդս , և կարգեցին առ փիղ փիղ հազար հազար այր սպառազէն , և պահապան ի գլուխ գնդիցն հինգ հազար հեծեալ , վառեալ նժոյգ ի ձեռն պաշտպան գնդիցն , զի ուր և կայցեն գազանքն՝ կայցեն և նոքա , և ուր և գնայցեն՝ գնայցեն և նոքա . և վանդակակապ մարտկոցս մեքենայիւք ի վերայ փղացն կազմեցին , և զիղապանն ի վերայ գլխոյն նստուցին , և զայլ այրուձին յաջ և յահեակ թեւս գնդին կազմեցին : Իբրեւ անտի արեգակն ծայրս արձակէր , առհասարակ ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն նշոյքն զերամբքն փայլատակէին , և ճառագայթք հատանէին իբրեւ ի փայլատականց հրոյ : Եւ երկայնէր ճակատն , զեղզըր որ զբարձամբք լերանցն , որ զձորովք և զլորովք և զդաշտիւք , և խաղային յառաջ առհասարակ կարգեալք և կազմեալք . միաբան շարժէին առհասարակ ամեննեքին որ լսէին զճայն բարբառոյ բազմութեանն , զշաչիւն զինուց , զշառաչիւն զերիվարացն , զթընդիւն զոտնաձայն վահանաւոր վառելցոց : Եկն եհաս ծուդա իւրով գնդաւն , կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ սլատրաստեցաւ յարձակեցաւ ի դիմի հարաւ գնդի թագաւորին : Յայնմ տեղւոջ յանդիման թագաւորին վեց հարիւր հեծեալ սպառազէն դիաթաւաւալ կացուցանէր յանդիման թագաւորին : Եղիազար Աւարան տեսանէր զմի ի գազանաց անտի վառեալ զարդարեալ , ի զէն արքունի վառեալ և նշանս արձակեալ , համարեցաւ թէ արքայն իսկ ի նմին իցէ . յարձակեցաւ ի վերայ գնդին յաջ յահեակ կոտորեաց , չոքաւ մինչեւ եհաս ի փիղ անդր նշանաւոր , զէն վերացոյց , և եմուտ ի ներքոյ , եհար և անդէն կործանեաց , և էջ նստաւ փիղն ի վերայ և զնա անդէն ճմլեաց : Նոքա իբրեւ տեսին զզօրութիւն զօրաց թագաւորին , խոյս ետուն ի նոցանէ . սակայն յոր կողմ և գային , ընդառաջ լինէին նոցա գունդքն արքունի , մինչև եկին ի կողմանս երուսաղեմի : »

Իւիք իւիք սմին նման է առ Բուզանդայ նկարագիր միոյ ի պատերազմացն Արշակայ և զօրավարաց նորա Վասակայ և

Բագոսի ընդդէմ Շապհոյ : Աստ եւս , որպէս անդ , Բագոս , իրեւ զԵղիազարն Աւարան , տեսեալ զիիդ մի սպառագէն վասեալ արքունի նշանաւ , և համարեալ զթագաւորն ի նմին , մտանէր ընդ գազանաւն և տապալէր զնա , բայց և ինքն ճմիչը ընդ նովաւ :

« Ապա թագաւորն Արշակ զիւր զօրսն բաժանէր ընդ երիս . և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին , և զերկորդ գունդն ի ձեռս Բագոսի եղրօր նորա , որ ի գործ արութեան քաջ էր անհնարին , բայց ի գործ իմաստութեան բախած էր . և զմեւս գունդն իսկ թագաւորն Արշակ առնոյր : Եւ տայր հրաման յառաջ խաղալ՝ պատրաստեալ առ դիպան պատահել զօրացն Պարսից : Գայր սպարապետն Վասակ , գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից , զՀազարաւուխտն , զի հասեալ էր ի գաւառն Վանանդայ , ի տեղւոջն որ անուանեալ կոչէր Երեւեալ , և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ : Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից , գարձան ի փախուստ , ցրուեցան սփուեցան : Հասանէր զօրալարն Վասակ , հարկանէր զամենայն զօրսն փախստէիցն Պարսից , և թափեցին աւար բազում և զիիզսն : Ի նմին ամսեան հասանէր Բագոս հանդերձ զօրօք որ ընդ իւրեւ էին . գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից , և զԱնդիկան զօրագլուխ նոցա , զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատենիցն Առեստեաց : Ապա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին և պատրաստեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց : Հասանէր Բագոսն ամենայն գնդաւն . ընդդէմ յարձակէին ճակատուն Պարսից , անդէն հարկանէին սատակէին զբազումն ի զօրացն Պարսից , և գլխովին զԱնդիկան սպանանիին : Անդ դիպէր Բագոս գնդին փղացն , և տեսանէր զմի ի փղաց անտի մեծապէս զարդարեալ , և զարքունական նշանս ի վերայ արձակեալ : Համարեցաւ զթագաւորն ի փղին յայնմիկ . իջանէր յերիվարէն , հանեալ զսուսերն իւր յարձակէր ի վերայ փղին . զէն վերացոյց , եմուտ ի ներքոյ փղին , հարկանէր զներտու փղին , և անդէն ընկենոյր զնա ի վերայ անձին իւրոյ , և սատակէին երկոքեան . զի ոչ ժամանէր ելանել ներքուստ ի փղէն : Ի նմին իսկ աւուր

հասանէր թագաւորն Արշակ հանդերձ զօրօքն որ ընդ իւրն . քտանէր զինքնին թագաւորն Շապուհ և զօրս նորա զի հասեալ մածեալ բանակէին ի գաւառին Բասենոյ , ի տեղիսն որ անուանեալ կոչի Պոխս : Ապա անկանէր գիշերի արքայն Արշակ ի վերսայ բանակին Պարսից , և անդէն ընդ սուր հանէր զբաղումն , բայց միաձի մազապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ , փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից : Յայնմ ժամանակի յերեցունց գնդացն միմեանց դիպէին աւետաւորք յաղթութեանցն : Բաց ի Բագոսէ , զի մեռաւ ի միում ճակատուն , այլ ոք ի զօրավարացն Հայոց ոչ ծախէր . յԱստուծոյ եղեւ մեծ յաջողութիւն յաղթութեանն : Յետ այնորիկ ի կողմանս Պարսից ասպատակէին , և հարկանէին մինչեւ ի կողմանս որ կոչին Խարտիզան . և լցան գանձիւք բազմօք և զինու և զարդու և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ , և հարստացան անցին ըստ չափ :

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԻՈՆԻ ՅԵԶՈՆԿԱՑ

« Մարկիոնս այս ի Պոնտացւոց աշխարհէ անտի եղեալ էր , որդի եափսկոպոսի : Եւ ապականեալ զկոյս մի՝ գնաց փախստական վասն մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն : Եւ երթեալ ի Հռոմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին , և չհասեալ այնմ՝ գրգռեցաւ ընդդէմ հաւատոց : Եւ եղեալ երիս առաջս՝ ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ : Եւ զնոր կտակարանս օտարոտի համարի ի հնոյն , և յայնմանէ որ ի նմայն խօսէր : Զյարութիւն մարմնոյ արհամարհէ , և մկրտութիւն՝ ոչ մի միայն տայ , այլ և երիս յետ յանցանելոյ . և փոխանակ երախայից մեռելոյ այլոց ստիպէ առնուլ կնիք : Եւ այնչափ յանդգնեալ՝ մինչեւ կանանց հրամայէ մկրտութիւն տալ , զոր ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել . ոչ կնիք կրկին և երեքկին տալ , և ոչ զկանայս առքահանայս ունել :

Նա և նմա իսկ ուստի՝ իցէ քահանայութիւնն , որոց ապականեալ զկոյս՝ տարագիր եղեւ յեկեղեցւոյ յիւրմէ հօրէն , մինչեւ ասպաշխարութեան եւս հասանել ոչ եղեւ արժանի . զի ի պատգամն հոգւոյն սրբոյ իշխեաց ձեռն արկանել , զկէսն

հատանել ընկենուլ իրբե զխոտան , և զկէսն ընտրել առնուլ իրբեւ զպիտոյս : Եւ զայն ոչ գիտէ թէ յորժամ ի մարմնոյ մատն մի կարիցէ առնուցու , զամենայն մարմնոյն իսկ վիայէ սակաւ ինչ մասնն կտրեալ : Առաւել եւս յանդիմանէ զնակատրիչն օրինաց որ ասէր՝ թէ Ոչ եկի լուծանել զօրէնս և զմարդարէս , այլ լնուլ զնոսա . և առաքեալն՝ որ ասէ , թէ Քրիստոս է խաղաղութիւնն մեր որ արար զերկոսին ի մի » (Եղն. 296) :

ԽՕՍՔ Ի ՄԷջ ԶՐՈՒԱՆԱՑ ԵՒ ՈՐԴԻՈՑ ՆՈՐԱ , ԱՐՀՄԵՆԻՆ  
ԵՒ ՈՐՄՁԴԻ , ՑԵԶՆԿԱՑ

« Մինչեւ բնաւ էր ինչ , ասեն , ոչ երկինք , ոչ երկիր և ոչ այլ ինչ արարած որ յերկինս և որ յերկրի , Զրուան ոնն անուն էր որ թարգմանի բախտ կամ փառք : Զհազար ամ յաշտ արար զի թերեւս որդի մի լինիցի նմա որում անուն Որմիզդ , որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսսա՝ առնիցէ . և յետ հազար ամի յաշտ առնելց՝ սկսաւ ածել զմտաւ , ասէ , ‘ Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ , և լինիցի՞ ինձ որդի Որմիզդ , եթէ ի զուր ինչ Հանայցեմ , ’ Եւ մինչդեռ նա զայս խորհէր , Որմիզդ և Արհման յղեցան յարգանդի մօր իւրեանց . Որմիզդն՝ յաշտն առնելց , և Արհման՝ ի յերկուանալոյ անտի : Ապա իւմացեալ Զրուանայ , ասէ . ‘ Երկու որդիք են յորովայնի անդ . որ ոք ի նոցանէ վաղ առ իս հասցէ , զնա թագաւոր արարից : ’ Եւ ծանուցեալ Որմըզդի վլուորդս հօրն՝ յայտնեաց Արհմենին , ասէ . ‘ Զրուան հայր մեր խորհեցաւ թէ (որ) ոք ի մէնջ վաղ առ նա երթիցէ , զնա թագաւորեցուցէ : ’ Եւ զայն լուեալ Արհմենին՝ ծակեաց զորովայնն , և ել եկաց առաջի հօրն : Եւ տեսեալ զնա Զրուանայ ոչ գիտաց եթէ ոք իցէ , և հարցանէր եթէ ‘ Ո՞վ ես դու : ’ Եւ նա ասէ . ‘ Ես եմ որդին քո : ’ Ասէ ցնա Զրուան . ‘ Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է , և դու խաւարին և ժանդահոտ ես : ’ Եւ մինչդեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին , ծնեալ Որմզդի ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ , եկն եկաց առաջի Զրուանայ : Եւ տեսալ զնա Զրուանայ՝ գիտաց եթէ Որմիզդ որդի նորա է վասն

որոյ զյաշտն առնէր . և առեալ զբարսմունսն զոր ի ձեռին  
իւրում ունէր , որովք զյաշտն առնէր , ետ ցՈրմիզդ և ասէ .  
‘Յայժմ ես վասն քո յաշտ առնէի , յայսմհետէ դու վասն իմ  
առնիցես : Եւ ի տալ Զրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և  
օրհնել զնա , մատուցեալ Արհմենի առաջի Զրուանայ՝ ասէ  
ցնա . ‘Ոչ այնպէս ուստեցեր թէ ո ոք յերկուց որդւոցն խոց  
յառաջ առ իս հասցէ , զնա թագաւոր արարից : Եւ Զրուանն  
առ ի չջրեց զուխտն , ասէ ցԱրհմնն . ‘Այս սուտ և չարա-  
գործ , տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի ,  
և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ . և յետ ինն հա-  
զար ամի Որմիզդ թագաւորեսցէ , և զինչ կամրցի առնել  
արասցէ : Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմն առնել արա-  
րածո , և ամենայն ինչ զոր Որմիզդն առնէր՝ բարի էր և ու-  
ղիղ , և զոր ինչ Արհմն դործէր՝ չար էր և թեւր :

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.

### ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Տիրանայ արձակ հրամանն կատարեցաւ նոյնպէս ի վերայ  
Ցուսկան . ոչ ինամութիւն նորա , քանզի փեսայցեալ էր  
Ցուսիկ Տիրանայ , և ոչ կաթողիկոսութիւնն , որ առաջին  
պատիւն էր զկնի թագաւորութեանն որպէս յետ այնորիկ  
նոյնպէս յառաջ , եղեն բաւական աղատել զմանուկ հայրա-  
պետն յարձակ հրամանէն Տիրանայ . Ցուսիկ եղեւ բրածեծ  
և մեռաւ . « Բրածեծ եղեալ չախջախեալ քահանայապետն  
Աստուծոյ երանելի մանուկն Ցուսիկ , կիսամահ կոչկոմեալ  
ընկեցեալ լինէր , զոր բարձեալ պաշտօնէիցն բերին ի գա-  
ւառն Դարանաղեայ , ի գեւզն Թորդան . և անդ ոչինչ յետ  
բազում աւուրց հանգեաւ » (Բուզ. Գ. ԺԲ.) : Նախարարի  
ուրուք ճոխի առանձին համարձակութիւնն միայն էր երբեմն  
ազատիչ ի բռնութենէ թագաւորին : Այսպէս , ըստ Բուզան-  
դայ (Գ. ԺԸ.) , Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք դիակե-  
լով առ Տիրանայ՝ կորզեցին բռնի զերկոսին տղայ մանկունս որ  
մնացեալ էին ողջ ի կոտորածէ անտի Ռշտունեաց : « Յայնմ

ժամանակի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս ,  
զջաճատ որդի Մեհնդակակայ ոշտունւոյ , և մեւս եւս Շաւասպ  
որդի Վաչէի արծրունւոյ , տղայք ստնդիայք , զօրս ածին  
առաջի թագաւորին : Իբրև տեսանէր (զնոսա Տիրան ,) տայր  
հրաման հանել փողոտել զմանկունսն , զի նոքա եւեթ ճետք  
մնացեալ էին յազգացն : Եւ անդ դիպեալ Արտաւազդ և  
Վասակ , արք ի մամիկոնեան տոհմէն , որք էին զօրավարք  
ամենայն զօրացն Հայոց , յարուցեալք անկան ի վերայ ման-  
կանցն տղայոց , մէն մի յանթի հարեալք՝ ի գուրս գնացին .  
զէն ի վեր առեալք , կուռոյ պատրաստէին ի վերայ այնց  
մանկանց մեռանել » (Բուզ. Գ. Ժ.): Իբրեւ Արշակ յանդիմա-  
նեալ ի Խաղայ , ըստ Խորենացւոյն , հրամայեաց քարշէլ և  
քարկոծ առնել զնա , « Տայգերք դստեր նորա ի մեծ նախա-  
րարութեանցն , ի կորովի և ի քաջ ազգէն Ապահունեաց ,  
սուսերս հանեալ կիսախողխող զքարչօղսն առնէին , և յա-  
փշտակեալ զԽաղ ի ճեռաց նոցա , յիւրեանցն գնացին գա-  
ւառս » (Խոր. Գ. Լ.):

Ոչ առանձինն մարդոց միայն , այլ և ողջոյն իսկ ցեղից  
ջնջումն կախեալ էր , յիրաւի կամ յանիրաւի , յարձակ  
հրամանէ թագաւորին : Այսպէս հրամանաւ կամ թոյլտուու-  
թեամբ Տրդատայ Մեծի բարձաւ ապստամբ ցեղն Աղկունեաց  
(Խոր. Բ. ԶԱ.): Հրամանաւ Խոսրովայ , նորին որդւոյ և յա-  
ջորդի , բարձան երկոքին անսաստ ցեղքն , Մանաւազեանն  
և Որդունին . Նոյնպէս Բզնունեացն և Աղճնեաց (Բուզ. Գ. Դ.  
Խոր. Գ. Բ. Բուզ. Գ. Ը.): ցեղքն Ռշտունեաց և Արծրու-  
նեաց հրամանաւ Տիրանայ եղեն գրեթէ բնաջինջ (Բուզ. Գ.  
Ժ.): , և կամսարականաց՝ հրամանաւ Արշակայ (Բուզ. Դ.  
ԺԹ. Խոր. Գ. Լ.Ա.):

Որպէս կենաց , նոյնպէս ընչից և ստացուածոց արձակ  
տեարք էին արշակունի թագաւորք : Պարգեւք ելանէին ան-  
դըստին ի թագաւորէն : ԶԱրտաշիսէ (Տրդատ—Արտաշէս )  
ասէ Խորենացին՝ Եթէ Սմբատայ սպարապետին իւրում , յետ  
պատերազմին կասպից , ետ կալուածս ի պարգեւ . « Իսկ Աըմ-  
բատայ երթեալ հնաղանդէ զամենեսեան . . . վասն որոյ ար-  
ժանի ըստ վաստակոցն պարգեւէ նմա Արտաշէս զմասն ար-

քունի որ ի շնու Գողթան և զլւզոու ակունս , և առ այսոքիւք և զաւարն ամենայն նմա թողու » (Խոր. Բ. ԾՊ.) : Նոյնպէս Տիրան Ա. , ըստ նմին Խորենացւոյ , տայ կալուածս մեծամեծս Դրուասպայ ումեմն պարսկի որ օգնական էր Երախնաւուի , խնամակալուին տէրութեան : « Զոր (զԵրախնաւու) սիրեալ արքայի՝ տայ նմա զգահն երկրորդական , և զհոգս արեւելեան զօրուն ի նա հաւատացեալ՝ առ նմա թողու զԴրուասպ ոմն պարսիկ , զմուերիմ իւր , որ խնամացեալ էր ընդ նախարարս Վասպուրականի , որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն , և զայդին մեծ յոր մտանէր առուն՝ գետ հանեալ ի ծովին Գայլատուայ » (Խոր. Բ. ԿԲ.) : Ըստ Բուզանդայ Խոսրով Կոտակ , իրեւ միահեծան տէր երկրին , յետ պատերապմին Մազքթաց , տայ զօրավարաց իւրոց , մանաւանդ Վաչէի որ սպարապետն էր , կալուածս . « Ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով տալ պարգեւս արանցն քանաց որ վաստակեցին նմա , և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց Մեծաց յամենայն մարտս ճակատուցն պատերազմաց : Եւ ետ Վաչէի զօրավարի զակունս Զանջանակին և զԵրաբաշխիս և զՅու գլուխ ամենայն գաւառակօքն հանդերձ . նոյնպէս և այլոց նախարարաց մեծամեծ պարգեւս » (Բուզ. Գ. Է.) : Եւ զՊապայ ասէ նոյն Բուզանդ թէ , յետ ճակատուցն որ եղեն ընդ Պարսս , յորոց մին էր Զիրաւին զոր պատմէ և Խորենացին , ետ պարգեւս բազումս և շնու Մուշեղի : « Յայնմ ժամանակի բազում պարգեւս և սպատիւս և բազում գիւղեան զօրավարին Մուշեղի Պապն շնորհէր » (Բուզ. Ե. Դ.) : Ոչ պարգեւս և կալուածս միայն , այլ և զողջոյն իսկ զգաւառս նախարարացն , մանաւանդ զյանցուցելոց այլում նախարարի տալց ունէին իշխանութիւն թագաւորք մեր : ԶՏրդատայ Մեծէ պատմի եթէ զերկիրն Սղկունեաց ի Տարօն ետ Մամդունայ նախնւոյն Մամիկոնեան ի ժառանգութիւն (Խոր. Բ. ԶՊ.) , և որդին Տրդատայ Խոսրով զերկիր ապստամբ բդեշխին Բակրոյ ետ Վաղինակայ սիւնւոյ (Բուզ. Գ. Թ.) : Զէր անսովոր ինչ թագաւորաց մերոց գրաւել երկիրս յարքունիս : Այսպէս Խոսրով զոր յիշեցաք բազում անգամ , յաջորդն

Տրդատայ Մեծի , գրաւէր յարքունիս զտուն Դատարենայ : «Եւ զտուն նորա կալան յարքունիս» (Բուզ. Գ. Ը.) , և Արշակ թոռն նորա՝ զերկիրսն Արշարունեաց . «Զտոհմն Կտմսարականացն որ էին գաւառաց տեարք , Շիրակայ և Արշարունեաց , ազգատ առնէր (Արշակ.) և զգաւառուն ունէր յոստան » (Բուզ. Գ. ԺԹ.) : Ահա կատարեալ պատկեր արեւելեան արձակ միապետութեան : Է՞ր հնար այլ ազգ սպասել ի թագաւորէ որ չէր ընդհատ յիւրմէ գրացւոյն , ի գոռող պարթեւականէն , հանդերձիւ և ձեւով անդամ , որպէս ցուցանեն դահեկանք առաջնոյ ժամանակին Արշակունեաց , արեւելեան խուրիւ որ չէր կարի այլակերպ յայնմանէ զոր կրէին թագաւորք պարթեւք , որպէս է տեսանել ի դահեկանս այս վերջնոց :

Զկարէր լինել այլ ազգ ի պարթեւականէն և վարչութեանն յօրինուածութիւն հանդերձ ամենայն ստովքն : Կատարեալ յերիւրուած վարչութեան որպէս առ մեւք , բաժանեալ յուրոյն ուրոյն պաշտօնարանս , ի գլխաւորմն անդամ , որպէս ելեւմոից , գատաստանի , ոստիկանութեան , պատերազմի , չէ հաւանութեան թէ եղեւ երբեք ի Հայո : Գործակալք յիշատակին արդարեւ , որպէս տեսցուք յետոյ , իբրև պաշտօնեայք , բայց ոչ այժմու մոօք , իբրև գլխաւորք , իւրաքանչիւր մէն միոյ մասին վարչութեան : Գոյր աւագութիւն և կրտսերութիւն ի գործակալութեան . բայց ոչ , ըստ արդի պայմանաց , օրինօք հրամանակարդութիւն , կամ այլով բանիւ ստորակարգութիւն , ըստ իշխանութեան և ոչ լոկ ըստ աւագութեան : Այնպէս ծառայ էին թագաւորին բդեաշխքն և աւագ նախարարք , որպէս խոնարհագոյն սպասաւորք զօրս «ստնկայս գործակալութեան» կոչէ Յուզանդ : Բուզանդ չխարէ կոչել ծառայս թագաւորին զնոխ իշխանն որպիսի էին բդեաշխն Աղձնեաց , և իշխանքն կորդուաց , Ծոփաց , Աիւնեաց , Հաշտենից : «Զայնու ժամանակաւ ապրստամբեաց յարքայէն Հայոց մի է ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց որ անուանեալ կոչէր բդեաշխն , որ էր մի ի չորից , գահերէց բարձերէց տաճարին արքունի : . . . Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր ծառայու իւր , զիշխանն կորդուաց զջոնն , և զիշխանն Մեծի Ծոփաց զՄար , և զիշ-

խանն Սիւնեաց զԱղլինակ , և զիշխանն Հաշտենից գԴատ , հանդերձ բազում զօրոք » (Բուզ. Գ. Թ.) : Այժմու պաշտօնեայք եւս կոչեն իւրեանց տէր զթագաւորն . բայց նշանակութեամբ գլխոյ և ոչ տեառն , և են համարատուք կամ պատասխանատուք , բայց ազատ վարիչք այլ եւ այլ մասանց միոյ միայնոյ քաղաքական մարմնոյ : Քաղաքական կամ վարչական յերիւրուածոյ այս ըմբռնումն ամենեւին իսկ օտար էր յոդւոյ արեւելեան միահեծան միապետութեան : Միով բանիւ , արեւելեան քաղաքակարթութիւնն , ոչ պարսկականն միայն և պարթեւական , թանձր և նիւթական , այլ և ոչ հելլենականն , ոգեւոր և փիլիսոփայական , կարաց լինել հնարագէտ և խելամուտ բաժանման վարչական գործոց որ այնպէս ընտանի է մեզ այժմ և առանց որոյ ոչ : Որպէս բուն օրէնսդրութեան , նոյնպէս բուն վարչութեան յղացումն է հռոմէական քաղաքակարթութեան ծնունդ , զոր արդի եւրոպականն հասցյ ի կատարումն :

Ելեւմտական դրութիւնն առ Արշակունեօք չկարէր լինել ընդհատ յայնմանէ որ էր առ Պարսիկս : Տէրութեան , կամ մանաւանդ թագաւորին (քանզի չգոյր ըստ բուն նշանակութեան անուանն տէրութիւն . տէրութիւն , ըստ բանից գաղիացի խրոխտ միապետին , « տէրութիւն ես եմ , » էր անձն թագաւորին ) եկամուտն էր կալուածական , յարդեանց մշակութեան և հովուութեան , որ գայր յարքունիս ըստ օրինի հասից և բաժնից , ձեռագիտական արդիւնք և գործուածք եւս գային թերեւս նոյնօրինակ յարքունիս : Եատք ի գաւառաց էին կալուածք կամ արարք արքունի , և կոչէին ոռա թագաւորին ընդ տեսչութեամբ մարդպետաց , որպէս և ընդհանուր երկրին մշակական և անդիորդական հոդ էր յանձն հաղարապետութեան « աշխարհաշէն աշխարհատած գեհկանութիւն » ըստ Բուզանդայ (Բուզ. Դ. Բ. ) : Թերեւս գայր հաս և մուտ և բաժ յայնց գաւառաց եւս որ էին կալուած նախարարաց կամ տանուտէրութիւն : Նաև մուտք եկեղեցւոյ առ քրիստոնէութեամբ էին ի կալուածոց զորս չնորհեցին առաջին քրիստոնեայ թագաւորք , մանաւանդ նախածանօթն Տրդատ որ զին կալուածս հեթանո-

սական մեհենիցն և այլ եւս բազումն սեպհականէր ի ժառանգութիւն եկեղեցւոյ , որպէս պատմէ Ագաթանգեղոս : « Եւ զդաստակերտն (անահտական մեհենին) հանդերձ գետնովքն և սահմանօք նուիրեցին եկեղեցւոյ ի սպասաւորութիւն » (Ագաթ. ձև.) . « Եւ զաւանն (մեհենին յԱնի) ամրաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյ նուիրէին » (Անդ. ձմթ.) : ԶԾրդատայ ասէ առանձինն . « Եւ թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ գրեաց չորս չորս հողս յամենայն ագարակ տեղիս . իսկ յաւանսն՝ եւթն եւթն երդոյ հող , ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուէր պտղոց Տեառն մատուցանէր » (Անդ. ձմթ.) : Նոյնպէս Խոսրով , որդի Տրդատայ , զբուն քաղաքս Մանաւագեանց և Որդունեաց որ սստանն էին նոցա՝ հանդերձ սահմանօքն նուիրէր եկեղեցւոյ . « Եւ ետ (Խոսրով) զաւանն և զբուն գահոյից գեւզն նահապետին Մանաւազենից զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառակաւն հանդերձ , և զբուն գեւզն Որդունոց , որոյ անուն էր Որդորու , ամենայն սահմանօքն՝ յԵկեղեցի » (Բուզ. Գ. Դ.) : Գրիգոր ունէր ի պէտս իւր և տոհմին իւրոյ յառանձինն կալուած , որպէս ասէ Բուզանդ , զՓորդան և զՓիլ . առաջինն՝ ի Դարանազիս , և երկրորդն՝ յԵկեղեցաց . « Իսկ սոցա (Գրիգորի և Արքստակեայ) պատրաստեցան տեղիք բնակութեան և շիրիմք հանդստեան , մեծին Գրիգորի՝ ի Դարանազեաց գաւառին , ի գեղջն որ անուանեալ կոչի Թորդան , և սրբոյն Արքստակեաց որդւոյ նորա՝ յԵկեցեաց գաւառի , ի Թիլն աւանի , ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ » (Բուզ. Գ. Բ.) : Բուզանդ այլուր հանէ մինչև ի հնդետասան զգաւառս տան Լուսաւորչին առ Ներսիսիւ . « Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն , զի հնդեպասան գաւառ ունէին իրեւ սեպհական ի բնէ , յԱյրարատ , ի Դարանազէ , յԵկեղեցաց , ի Տարօն , ի Բղնունիս , ի Ծոփս , և որ ընդ մէջ նոցա և շուրջ զնոքօք » : Թուի իմն եթէ յաճախութիւն կալուածոց եկեղեցւոյ տուեալ էր տեղի քրթմնջելոյ , մինչև Մարդպետին Արշակայ մեղադրել , կամ , որպէս ասէ Բուզանդ , « թշնամանս դնել Տրդատայ . . . ազգի , տակի

և տոհմի Արշակունեաց, թէ զիարդ զայնպիսի տեղիս (զկող-  
մանս Աշտիշատու) կանանցահանդերձ մարդկան տուեալ է »  
(Բուզ. Դ. ծ.Դ.): Պապ նուազեցոյց զկալուածս եկեղեցեաց  
եղեալ նոր կարգ . կալեալ յարքունիս զհինդ եօթներորդս  
ի հողոյ անտի եկեղեցեաց՝ թողըր զերկուս միայն, և կարգեալ  
առ իւրաքանչիւր հող մէն մի երէց և սարկաւագ՝ զմնաց-  
եալսն առնոյր ի ծառայութիւն տէրութեան : « Հատ յար-  
քունիս Պապ թագաւորն զհող եկեղեցւոյն զոր տուեալ էր  
թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայա-  
պետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն  
Հայոց . զի յեւթն հողըն զհինդն հատանէր յարքունիս, և  
թողըր միայն երկուս երկուս՝ առ գեւդ մի երէց և սարկա-  
ւագ, և զայլն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութիւն  
զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն » (Բուզ. Ե.  
ԼԱ.): Զայս յիշատակէ Բուզանդ իրրև ի հեծուկս ինչ Ներ-  
սիսի գործեալ, կուտելով, որպէս տեսցուք յիւրում տե-  
ղով, բազում բանս զրազարտութեան զմանուկ թագաւորէն,  
որ կատարեաց զոր ինչ իրրև 1500 ամօք յետոյ հազիւ իշ-  
խեաց կատարել մին յաշխարհաշէն կայսերաց մերոյ ժամա-  
նակիս (Յովսէփ Բ.) ի կարճել զբազմութիւն դատարկապորտ  
մարդկան, որոց առատութիւն եկեղեցական մտից լեալ էր  
պատճառ տալոյ զանձինս ի յուլութիւն վանական կենաց :

Յարդեանց անտի մշակութեան էին ոչ միայն մուտք  
թագաւորին և եկեղեցւոյ, այլ և բազում անդամ հարկը  
տուեալք օտար տէրութեանց, որոց պէսապէս ազգք էին,  
հաս և մուտ և սակ և բաժ : Այսպիսի էր մեծ մասն հարկին  
զոր տային Հայք Ասսանեանց՝ յետ անկման թագաւորու-  
թեանն ըստ Կղիշէի, որ յետ տրտնջելոյ թէ « Ծանրացուցին  
զհարկ աշխարհին, քանզի ուստի արժանն էր առնուլ հարեւը  
դահեկանաւ չափ՝ կրկին առնուկին, » յաւելու . « Նա բնաւ  
ով իսկ կարէ սլատմել վասն ծանրութեան մտից և սակից,  
բաժից և հասից լերանց և դաշտաց և մոյրեաց » (Յզիշ. Էջ  
40), և այլուր (Էջ 76). « Իսկ զմտից և զսակից և որ այլ  
եւս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա  
երթայր յարքունիս :

Նաև պարգեւք որ ելանէին ի թագաւորաց՝ էին մանաւանդ կալուածքք քան մեծամեծ գումարք ոսկեոյ և արծաթոյ։ Պարգեւք զոր ետուն Արտաշէս, Տրդատ, Խոսրով և Պապ զօրավարաց իւրեանց և այլոց, որպէս տեսաք վերագոյնն, էին կալուածքք։ Խուզանդ ի յիշելն Յոհան անուն եւ պիսկոպոսի ուրուք զխեղկատակութիւնսն, որովք կորզէր նա պարգեւ ի թագաւորաց, չառնէ ինչ յիշատակութիւն զոսկեոյ և զարծաթոյ, այլ զմուրհակաց կնքելոց գիւղից և ագարակաց։ «Յոհան եպիսկոպոս, որդի Փառենայ, յորդամ երթայր առ թագաւորմն Հայոց, խաղակատակ լինէր նոցա։ . . . Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր առաջի թագաւորացն, և զրւյոու զճայն ածէր կառաչելով, և ընդ կառաչեն ապա մի մի բան խառնէր ասելով։ Ուզու եմ, ուզու եմ, և զարքայի զմեզս բառնամ։ դիք ի վերայ իմ զմեզս արքայի, թող բառնամ։ Խոկ թագաւորին զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ՝ դնէին ի վերայ ողինն Յոհանու փոխանակ ընդ մեղաց իւրեանց, և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւզս և ագարակս յուղտն լինելոյ և զմեզսն բառնալոյ, (Բուզ. Զ. Ժ.)։»

(Մատուցի յատաջ)

Ա. Մ. Գ.

## ԳԻՏՆԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԱՒԹՈՒԹԻՒՆ

ԲՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ՎԱՂՈՒՑ ՃԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՏԻ ՄԻՆՉԵՒ ՅԱԽՈՒՐՄ ՄԵՐ

Բ.

Պատկառ կալ անուանց և ճոխութեան (autorité) և յարհամարհանս ունել զփորձ իրաց՝ բաւական են որպէս ի նկարուցուցանել զինչ ժամանակն էր մթին։ Ճոխութիւն անուանց էին օրէնք արծակ, և ոչ ոք էր որ ընդդէմ դառնայր անխախուտ կարծեաց ուրուք վարդապետի։ Ի գպրոց բժշկա-

կան ճարտարութեան շատ համարէր կրկնել եւեթ և մեկնել զվարդասկետութիւնս Գաղիանոսի . և եթէ սակաւք ոմանք յուսուցչաց , յետ ի գիպաց ինչ հերձը գիտակն մի մարդկեղէն , առնուին ի միտ զի մսալեալ էր Գաղիանոս ուրեք ուրեք , կային լուռ . կամ , եթէ խօսել ինչ իշխէին եւս , առանց կրիք ըստգտանելց զայն որ վրիտեալն էր , հաւաստեաւ իմն ասէին զգործեաց մարդկեղէն մարմնոյ փոխեալ յայլ կերպ ի ժամանակէ անտի յորում գրէր անդամազնինն անուանի : Այս էր օրինակ ուսուցանելց զուսումն բնախօսութեան և զանդամազնութեան , որոց կարի դոյզն եղեւ յառաջադիմութիւն իրրե զհազար ամ:

Ի տասն դարս անդ տգիտութեան , ընդ որս էանց Եւրոպէ յառաջ քան զհասանել ի ժամանակ անդր որ կոչի Նորածնութիւն , ջահ գիտութեանց չէր շիշեալ ընդ աշխարհ համօրէն . յԱրեւելս անդ շողայր շքեղն պայծառութեամբ : Նոր իմն քաղաքաւորութիւն , հաստեալ յԱրաբացւոց անտի , զիշխանութիւն պետութեան իւրոյ ազգեցուցանէր ի բացաձիգ հեռագոյն կողմանս երկրի : Ընդ ամենայն տեղիս ուր և պարզէին զգրօշ իւրեանց աշակերտեալք Կուրանի , ի Պարսս և յԱսորիս , յաշխարհին Արաբացւոց և յերկրին Սպանիացւոց , ի ժամանակի անդ յորում թագաւորք Գաղիացւոց ոչ գիտէին իսկ ընթեռնոււլ զալիքաբետս , համալսարանք որ ի Պալտատ , և որք ի Սեվիլ , ի Թորէտ , ի Կրընատ և ի Քորտու , (ի չորեսին քաղաքս անդ Սպանիացւոց աշխարհին ,) ի չորից ծագաց երկրի ընդունէին աշակերտս հազար հազարաց : Յամենայն կողմանց ընդ որ և անցանէին Արաբք՝ ժողովէին յիշատակարանս արուեստից և գիտութեանց : Այլ ի չար բախտէ՝ պատերազմունք առանինք , արշաւանք խաչակրաց և հուսկ ապա նուաճելն Սպանիայ ի Փերդինանդեայ , բարձին ի միջոց սպառսպուռ զքաղաքաւորութիւնն մեծապայծառ , զորմէ ոչ սակաւք ի պատմագրաց չկամեցան գրել արդարութեամբ : Ազգն Արաբացւոց ոչ ժողովոլ ինչ լոկ էր , որպէս կրկնենն ստէպ . այլ եկաց նա ազդ լուսաւոր ի միտս , անցեալ զանցեալ զամենեքումք որ ժամանակակից ազգք էին , և ոչ մի ի ժողո-

Վըրդոց եղեւ իրրեւ զնոսա վաստակաւոր արդեամբք յայնչափ ինչ սակաւ ժամանակի :

Այլ սկիզբն փարատելոյ մժութեան միջին դարուն եղեւ ի հնգետասաներորդ դարու անդ : Կութեմպէրկ եգիտ զարուեստ տպագրութեան . Քրիստափոր Կոլոմպոս ած ի յայտ աշխարհ մի նոր . Լութէր ազատ կացուցանէր զմորհուրդ կրօնից , և առաջի բազմապատիկ գիտոց գիտութեան որք գային ի լոյս հանապազօր՝ ճոխութիւն անուան , վարդապետութեանց և կարծեաց լինէր տակաւ անհետ :

Ուսումն աստեղագիտութեան ցուցանէ՝ թէ չէ երկիր կենդրոն տիեզերաց , այլ հիւղէ մի անզնին յայնչափ անչափ թեւրս բիւրուց աշխարհաց , որ առաւել յոյժ են քան զնա տարածիւք : Երկրախօսութիւն ուսուցանէ՝ թէ երկրագունդ մեր է յարդեանց անտի բազմապատիկ փոփոխմանց որ գործեցան յընթացս անչափ բիւրուց դարուց : Ուսումն նշխարաց ծածկելոց ի ծոցի նորա յայտ առնէ՝ թէ բնակիչք երկրի , ոչ անդէն ետ ընդ ետ , այլ գամ քան զգամ երթեալ ի կատարումն անդր՝ եկին մինչև յայժմու կերպարանս . և բնախօսութիւն առնէ զմեղ խելամուտ օրինաց ինչ որոց կան հսկատակ զարգացումն և պաշտամունք էականաց :

Անդրէաս Վեզալ , երիտասարդ ոմն որ էր ամաց քսանեւութից , զմիջոցաւ վեշտասաներորդ դարուն , ի բաց ընկեցեալ զլուծ աւանդութեանց անդամազննութեան՝ եմյծ զգիտութիւնն ի նոր իմն շաւիդ : Համարձակէր զառաջինն գրով ցուցանել՝ թէ Գաղիանոս գրիպեալ էր ոչ դուն ուրեք յանդամազննութեան , թէ չէր երբեք քաջանուն բժշկին հերձեալ դի ինչ մարդոյ , և կտրոց ի ձեռին յօրինէր մատեան մի , De corporis humani fabrica (Զիազանինէ նորիկեղէն մարհաց ,) որ է գլուխ գործոց սքանչելի : Մարթի զնոյն ինքն զվեզալ համարել հաստիչ անդամազննութեան և բնախօսութեան արդեաց : Բազումք ի ժամանակակցաց նորա , կօսթաշ , ֆալօք և այլք , եղեն նշանաւոր անդամազնինք :

Ի սկզբան անդ եւթեւտասաներորդ դարուն , բժիշկն

անդղիացի Հարվիլ եգիտ զջրջան արեան, և այս դիւտ լինէր քայլ մի անհուն յանդամազննութեան:

Յամին 1760 Հապէր, այր դիտուն և բանաստեղծ միանդամայն, կցեալ ի մի զցան և ցիր մատունս նիւթոց բնախօսութեան՝ յօրինէր մատեան մի կատարեալ զնմին գիտութենէ: Յաջորդք նորա, Պլումենպախ, Թրեվիրանուտ, Պիշա, Մաճենտի, Պուրտախ, Թիտեման, Միւլէր, Քարուս, Պիչօֆ, Բուրքինեէ, Վալանթէն, Այլովքն հանդերձ, կացին ի նմին դարու:

Գ.

Զի դիտաւորութիւն ոչ այլ ինչ էր մեր՝ բայց որպէս ի ստուերագրի բերել ի մէջ աստ զպատմութիւն զերեւելի երեւելի դիտոց որ եղեն ի բնախօսութեան, չէ մեզ ի դէպ ասլաքէն կալ զրադել յերկար զնովին պատմութեամբ: Այլ ոչ անօգուտ ինչ համարիմք ցուցանել աստէն կարծ ի կարձոյ զհանդամանս ազդեցութեանն զոր գործեցին գիտք դիտնականք ի յառաջադիմութիւնս բնախօսութեան, եւս և զընթաց բժշկական ձարտարութեան ազդեալս ի բնախօսութենէ: Ամենայն դիտութիւնք սինդագոյնս կան հաստատեալք ի ստուգութեան, և յառաջադիմութիւն միոյ ի դիտութեանց կախեալ կայ սերտիւ զյառաջադիմութենէ այլոց:

Յառաջ քան զպարգանալ քիմիական ուսման, չմարթէր իւրիք տալ զմեկնութիւն երեւութից հալման և տուրեւառի շնչոյ: Զէր հնար ի միտ առնուլ զյօրինուած տեսանելքաց և լսելքաց՝ առանց մանր վարժիւք խելամուտ լինելց օրինաց լսողութեան և տեսողութեան: Ուսումն մենքենական ի վեր եհան մեզ՝ թէ որպիսի՛ իցեն օրէնք չըջանի արեան, և թէ զիարդ կատարի տեղափոխն լինել. և եթէ չէր եկեալ ի լցո գործի մանրագէտ, ներքին կազմած հիւսից մարմնոյ մերոյ կայր մեսոյր ամենեւին անծանօթ:

(Մասուսցի յառաջ)

8. գ.

## ԲԱՆՔ ԶՀԱՅ ԼԵԶՈՒԵ

Ա. Մ. — ԱՇ. չէ վիճելն անօդուտ . աստ վիճել՝  
զհաշակէ լեզուի է , ոչ զկերակրոց : Վիճել պարտ է մեզ ,  
նա ոգորել իսկ և կռւել և եթէ ընդ բեւր աղէտս , ընդ  
բեւր թշնամանս և ընդ ծաղր իսկ անցանել հասանիցէ , չէ  
պարտ մեզ խրտչել և ի բաց ելանել ի պայքարէ . քանզի  
խնդիր է կենաց և մահու չնաշխարհիկ լեզուի մերոց հարց :  
Եթէ սակաւիկի մի եւս թոյլ տայցեմք այժմու ապականութեան  
տիրել ի մատենագրութեան և տարածեալ ըմբռնել զամե-  
նայն անկիւնս գրական աշխարհի , այնուհետև չիք այլ յոյս  
լսելոյ զհոյակապ բարբառն Մերուպեան պայծառագոյն ժա-  
մանակի մերոց հայրենեաց . այլ փոխանակ նորա ճիւաղ իմն  
յոյն-լատին-սաքսօն բարբառոյ , կամ լաւ եւս ասել՝ հոթեն-  
թօթ-զուլու լեզուի : Մի՛ զարմանայք ընդ անունդ զոր տամ  
այդմ լեզուի . մի՛ կատակ ինչ կամ խաղ թուեսցի ձեզ զոր  
ասեմ : Յորժամ զկոյս գեղեցիկ խոցեալ վիրաւոր և համակ  
յարիւն թաթաւեալ և տապաստ կործանեալ յերկիր ոք տե-  
սանիցէ , մի՛թէ կարիցէ հանդուրժել տանել և չառնել ինչ  
զնմանէ փոյթ . նոյնպէս և ես յորժամ տեսանեմ զնաշխար-  
հիկ լեզուն մերոց նախնեաց գանակոծ , չարաչար վիրաւո-  
րեալ և ամենեւլին իսկ զգեղն կորուսեալ և ապականեալ ա-  
նարդեալ , մի՛թէ հնարի իցէ ինձ ժոյժ ունել համբերել , չբառ-  
նալ ճիչ և բողոք և չառնել զաշխարհ վեր ի վայր :

Եթէ կամիք , օրինակօք ինչ հաւանեցուցից զձեզ այժմ :  
Առէք , տեսէք մասն ինչ չափաւոր բանից որ չեն ի կարի  
խրթնագունից .

Փերոք յաւերժիւք Ահեկ Մեհեկ  
Հարցեն ամոյ ամոյ սիրտս հէգ .  
« Ճետք զգօնից հարց զգօն լիք  
« Են այլ աստղունք լուսածդիկք : »

### Ա.յլ

Փայլսկն աչօք թաւալագլոր վէմք արաստոյ թեւաբուսիկք  
ի ճողիկիւն ի ճիչ թառանչ պատառեն զծոց . . . ծովուն :

Ա. Հ.

Վէտ վէտ վիժեն ալիք խուն առ խուն  
Մէտ մէտ մրցեալ մսին մուն առ մուն :

Հերձ հերձ առուք զոյգ զոյգ միանան,  
Հերկ հերկ յարտիցն ակոս ման ի ման :

Ծաղկունս տածէ Մանկիկ մորձ զիւր նմանեակ .  
Փափկիկ ափովն արբուցանէ ցուրտ ալեակ .  
Թինդ թինդ առեալ կայտոէ բոյս առ բոյս ,  
Խինդ խինդ շարժէ զաշկունս լոյս առ լոյս :

Հեւ հեւ փշեալ յալեաց ծիր և ծիր  
Թեւ թեւ հերձու դառնայ ծիր եւ ծիր :

Պիշ պիշ հայի նդ դոնդողս սահ եւ սահ  
Նիշ նիշ ձայնէ դողդողս ահ և ահ :

Ա. Հ.

Դարք հնացեալք քօղք են քո սքողիչք յաղտս աչաց .  
Յաւերժութիւն իսկ՝ յանմահից քեզ առագաստ .  
Ամէնալոյս , ամէնահրատ , ամէնատուծ ,  
Որոյ ստուերք լոյս են մեզ և կեանք , համայն մեր բաստ :

Եւ զարմազան տարող սեւիցս երկրոյս գընտակ  
Պատուանդանի պատուեալ անուամբ ընդ քեւ դայ հիռ .  
Անդ զոր գիտեսն միշտ՝ քննես իրը անդիտակ .  
Հազիւ յարդիւնս մեք՝ դու յառիթսն յար յակճիռ :  
Մեծդ՝ ի փոքուս մեծս աստ դիտես քան յամէն ուր .  
Մեծ քոց ցասմանց և մեծ սիրոյդ սա վայր անսահ .  
Եւ հրաշալի ծոցոյդ թափուած ի սմա մաքուր ,  
Որով երկիր նոր քեզ ու երկրորդ ձուլեցաւ դահ :  
Արդ ցողեա , արդ շանթեա . խիթամ ոչ , ո՛ և անհաս ,

Յիմաստութիւնս , ի զօրութիւնդ և յանհուն սէր .  
Ըշանթ և ցող՝ լարեալ մի հիւս , զոր դուգ ամաս ,  
իմաստնանամ , պնդիմ , ձգտիմ առ քեզ ի վեր :

Ա.յԼ

Եւ դու՝ խանդ , արփոյն կաթումն , երկնից համբոյր յոշ  
ջոյն գեղց :

Որ յէից վեհից ցյետին նուրբ շամանդաղ ոգեխառնեալ՝  
Եւ ի միտըս և ի վին Զուարթնոյն շընչես երգաբանի ,  
Շանդ դու շող՝ յաւիւն զգօն խրախոյս բաժակ դու հրածորան ,  
Դու և յայս խօսեաց ի սիրտ և ի սոյն լսրս ըզաբերձն հանդէս :

Ա.յԼ

Իսկ այս ո՞լ են փայլ ի փայլ բոյլք նըշուլից հոյլ արփենից ,  
Ի լուսատարր օդոյ յանօսր ի շողից նոր նկարեալ գեղք ,  
Ճաճանչից երկնամեմիկ գեղցյն լուսոյ ցողեալ յընցուղք ,  
Որ զահեղ ըզհետ գընդին դութեալ նազին երկվարօք :

Ա.յԼ

Մեռանիմ ես . . . : Ցրտաշունչք

Եւ թուխք հարին զիս հողմունք .

Եւ իբր ըստուերս խուսափիուկս

Տեսի զգարունս ի փախուստ : (\*)

(\*) Ոչ գիտեմք յանուանէ թէ ո՞յլ իցէ Թարգմանութիւն տողիցդ քաղելոց ի զեղենիկ երգոյն (Թօրուուն ուեւեւոց) Միլվուայ բանատեղծին զաղիացոյ . այլ զիտեմք քաջ զի Թարգմանութիւնդ այդ , զոր բերեն ի մէջ Հարք Վենմատիկ ի ծուռուուն հասուածուանդ անդ իբրև օրինակ իմն ընտիր ընթերցուածոց , չէր արժան առաւել պատույ քան զոր մատուցանէն Թըղթակից մեր ի հաստածի ասս իրում .

Զնոյն հանեալ է եւ մեր ի հայ եւ ածեալ ի լոյս ի Հանդիսիս : Դիտարութիւն մեր չէր այն՝ ի կշիռ համեմատութեան մասնել ի դոյն Թարգմանութեան անդ , նա' եւ չէր իսկ տեսեալ մեր զառաջին Թարգմանութիւնն . այլ քանզի պայքար մեծ յարուցեալ մղի այժմ ընդ պաւուսեանս եւ ընդ ապաղոսեանս , Թուի մեզ թէ չիցէ ամեննեւին անդէպ հրափրել զրանասէրս մեր հարկանել ընդ միմեանս զերկոսին Թարգմանութիւնս , զվենեստիկեանն եւ զփոսիորեան , եթէ՛ ըստ հարազատութեան լեզուին եւ Թարգմանութեանն եւ եթէ՛ ըստ կանոնաց չափով բանից :

Սոցին նման անհամար անթիւ են օրինակքն որ գտանին ի մատեանս, ի գրական լրագիրս և ի քարտէսս ցրեալս։ Մարթէ ասել թէ հեղեղ իմն է խորթ, անձահ և անհեթեթ գրածոց որ ողողեն գհրապարակ նորոյ հայ մատենագրութեան։

Ա. Պ. — Եթէ այդպէս դժուարին առ իմանալ են մատեանքդ այդոքիկ, որպէս զօրինակս զոր բերես դու ի մէջ, ո կարէ իմանալ հասու լինել նոցա, բայց միայն զի մեկնել ոք կամեսցի ի պարզ և ի մեկին հայ բարբառ։

Յ. Գ. — Կարի ի գէպէ է խոստանալ զմրցանակն Խզմիրեանց որոց մեկնելն կամեսցին գոնեան զմասունան որ չեն դիւրին առ իմանալ. բայց լաւ եւս է զվարձս Մոնթիոնի խոստանալ որոց կամեցինն թարգմանել ի գաղիական բարբառ. քանզի քար փորձութեան է բարբառդ այդ։ Ամենայն գրած որոյ հտպտեալ պշրեալ իցէ ոճն և բռնազրուեալ ուռուցիկ զարդուք աճնեալ՝ անդէն դատապարտեալ ի փորձոյ անտի թարգմանութեանն՝ գտանի մերկացեալ և ոին յիմաստէ։

Ա. Գ. — Զոր ասեսդ՝ ճշմարիտ է։ Յիշեմ զբանս ինչ իմաստունս բարեկամին իմոյ Ա. Հ. — Յաւուր միում ի սենեկի նորա էի, և պարապէր նա ընթերցուածով ճեռնագրի իրիք ի ուամիկ հայ բարբառ զոր տուեալ էր նմա ոմն առ ի քննել և յարդարել։ Այնչափ էր անիմաստ և սովիեստական գիրն՝ մինչեւ բարեկամին իմում գոյել։ «Ո տգէտդ եւ պանդոյր, «է՞ր ոչ գրեցեր զայդ նախ ի գաղիական բարբառ, յորմէ «մարթէ էր քեզ հասու լինել թէ ո՞րչափ մերկ և զուրկ է յի- «մաստէ զոր գրեսդ։» Զայդը ճշմարտութեան իմ իսկ զփորձ առեալ է բազում անդամ, յորժամ դէպ լինէր թարգմանել յօդուածս ինչ ի թուրք լեզուէ կամ ի ուամիկ հայ բարբառոյ այժմու մեծամիտ յանձնապաստան և ունայնախօս գրչաց։

Ա. Մ. — Ունիմ ասել ձեզ և այլ ինչ որ նոր է և անլուր

Այլ զոր ասացարս ոչ վասն այնպիսեաց է որք ընդ մի համար զնեն զուկի եւ զկաւ. զի յայտ ի փորձոյ իրաց է թէ չէ մարթ ազնուացուցա. նել զխցքեկազոյն եւ զխոշորազոյն նաշակ զրչաց ոչ սակաւուց, որ թուին իմն լինել կաթոզին՝ զչայ լեզուէ, և անզամ ոչ զիտեն թէ ո՛ր այն իցէ հայերէնն հարազատ, եւ ո՛ր այն՝ խորթն եւ օտարոտին։

և կարի զարմանալի՝ թուի ինձ թէ ոչ ոք մինչեւ ցայժմ միտ եղեալ է այնմ:

Ս. Պ. — Սխալիս, բարեկամ. այն, տակաւին ոչ գիտեմ զոր ասելոց ես. սակայն զայն գիտեմ թէ յետ աւուրց ինչ ընթեռնոց եմք յԱրեւելք լրագրի թէ ոմն ի մերոց իմաստնոց, Հրանդ ոմն, Հրազդան ոմն, Հրազէն ոմն, Հրետան ոմն (ամենեքեան հուր են,) ի բազում ամաց հետէ, թերեւս և նախ քան զծնունդն՝ դիտէր զայն քաջ քաջ. նա թէ եւ ի մօտոյ հանելոց էր զայն ի հրապարակ:

Վ. Մ. — Թող զկատակադ և միտ դիր այնմ զոր ասելոց եմ: Մատենագիրք Մեսրոպեան պայծառագոյն ժամանակի հայ մատենագրութեան յայնչափ բարձրաբերձ բարձունս փառաւորութեան և կատարման կասուցին զտոկմային բարբառն մեր, մինչեւ ամենեւին նմանել նմա այժմու կատարելագոյն լեզուաց Եւրոպայ որ բանաստեղծանն կոչին: Հին յունարէնն և լատինականն որ կատարելագոյն բարբառք հնոյն աշխարհի են, կարի յետնեալ գտանին առ մերովս ի պայմանաց անտի կանոնաւորն և ճիշդ յօրինուածութեան: Որ հազար չորեքհարիւր ամօք կանխագոյն յօրինեալ կանոնեալ բարբառն էր՝ այսօր հանգոյն նմանագոյն գտանի գաղիական կամ անդղիական յղկեալ ողորկեալ և ճշդագոյն լեզուաց: Նոցա միայն հնար է խելամուտ լինել այդմ, որոց թարդմանեալ իցէ երբեք յերից այսոցիկ լեզուաց միանգամայն, այսինքն ի յունական, ի լատինական և ի գաղիական լեզուաց: Աւասիկ այդ է կէտն նոր և անլուր, որում մօտադիր ոք չէր եղեալ մինչեւ ցայսօր: Ակադեմիայն մեր չգիտէ զայդ:

Վ. Գ. — Յառաջագոյն ասացի թէ ի մատենագրութեան մերոց նախնեաց է տեսանել նախ ընտրութիւն բանից կամ անուանց: Արդ, յետ ընտրութեան բանից որ ամիսոփեալ իմեւեն ընդ սահմանօք կարդելովք, որպէս ի վեր անդ ասացի, գայ արուեստն դպրութեան որ արդարե յոյժ զարմանալի է և այնչափ վայելուչ և սիրելի և յանկուցիչ, մինչեւ՝ որոց միանգամ զայնը զճաշակ առեալ իցէ՝ անհնարին լինել նոցա առնուլ զայլոյ ո և պէտ գրածոյ գչամ: Եւ յիրաւի իսկ. այլ

ո' և պէտ ոճ կամ պայման գրածոյ՝ խոտորումն է յընտիր և յազնուագոյն ճաշակէ անտի և յանշարժական, հաստատուն կանոնաց Ոսկեղէն մատենագրութեան։ Ասու ամենայն ինչ ճշգրտեալ կշռեալ է . չիք ինչ որ աւելորդ իցէ, և չիք ինչ որ դատարկ գտեղին իւր թողուցու։ Աքանչելի է կարգն մասանց բանի յորոց ճառն կազմեալ յօրինեալ է։

Ա. Պ. — Մի՛, բարեկամ, մի այնչափ աշխատ զանձն առներ . դիտեմք մեք զայդ ամենայն։

Ա. Գ. — Չեն առ ձեզ բանք իմ. այլ առ այնոսիկ որ ոչ դիտեն։

Ա. Պ. — Զայն յանապատի։

Մ. Մ. — Այո՛, ճայն յանապատի։ Ի բազում ամաց հետէ գրեմք, քարոզեմք, գոչեմք և աղաղակեմք . սակայն ամենայն ինչ անօգուտ է . չիք ոք որ առնու ի միտ, չէ ոք որ մանր ի քնին առեալ որոնեսցէ զալատմառս այլակերպութեանն ընդ մէջ ոճոյն իւրեանց և մերոյս և կամեսցի գալ անկեղծ մտօք յուղիլ պողոտայն։ Են բազումք որ, անգիտակք իրացն, ձգեալք միայն ի հեղեղէ անտի որ մղէ վարէ զամենայն, կան և գրեն և բազում քարտէսս մրեն։ Սակայն զի՞նչ պարտ իցէ ասել զայնցանէ որ տղէտք և ամենեւին խակք և անտեղեակք ոդւոյ և ճաշակի, նա եւ դպրութեան խակ Հայերէն լեզուի, նոտին և զմեր մատեանս քննեն, խըծքեն և դատապարտ առնեն։ Մինչեւ ցե՞րք Սինէացիք եկեալ խծրծիցեն զլիթրէ, զշիւկոյ և զայլ անուանի մատենագիրս գաղիացւոց՝ վասն գաղիերէն իսկ լեզուի։ — Զոր գիտէքդ, բարեկամք, չէ հայերէնն զոր մեք իմանամք։ Հայերէնն մեր ունի ինչ մի նուրբ և անօսր, գեղ իմն ծածուկ, անդայտ, շլարշեալ և փափուկ, հուսկ՝ զէտէ՞ զնում մի որ ծածկեալ է ի ձէնջ . քանզի ոչ կարէք գտանել զնա, քանզի ոչ կամիք խնդրել զնա։ Արդ, մեծաւ աղաղակաւ և սաստկաձայն փողովք (ոչ կույսուսոց կողմէն) և եթէ գրոշմել եւս ուրեք պիտոյ իցէ, երեքկանդնեայ գրովք գրեմք և յայտ առնեմք թէ զոր գիտէքդ և գրէք չէ հայերէնն զոր նախնիք մեր աւանդեցին մեզ։ Քաջ գիտեմք, այո՛, թէ լեզուի իմիք չէ հնար անշարժ լինել և անփոփոխ և յընթացս չորեքտասան

և աւելի եւս դարուց կալ մնալ նոյն և մի : Ըստ պահանջելոյ պիտոյից գիտութեան և արուեստից որ յառաջադէմն դիմեն օր ըստ օրէ՝ պարտ է նմա կրել փոխանունս, մեծանալ և ընդունել յաւելուածս անուանց և երբեմն իսկ վերադրաց՝ առ ի զվէսպէս և նորագոյն տեսլեանց և իրաց գշանգամանս յայտ առնելոյ : Զայդր զհետ գայ թէ պէտք են անկրաժեշտ յօրինելոյ, սուելծանելոյ անուանս զիրաց իրաց որ չէին յառաջագոյն ի միջի և յետոյ ուրեմն եկին ի յայտ : Սոյն պէտք բռնականք և զմեր կողմն ի գլխովին ի նեղ արկեալ տագնապէին ի բազում ժամանակաց հետէ . սակայն խայթ մոաց խղճականաց արգելոյր զմեղ ի ձեռնամուխ լինելոյ ջերմաջերմ ի դոյն գործ յանդգնութեան, զի մի գուցէ աղաւաղիցեմք զլեզուն և գտանիցիմք մեղուցեալ ընդդէմ ոգւոյ և կանոնաց նորա : Ե՛, բարեկամք . չէ գործ այնչափ դիւրին գրել նուիրական լեզուաւ մերոց նախնեաց :

Ա. Պ. — Կարի շատք գրեն ի դոյն լեզու :

Ա. Գ. — Բազումք են կոչեցեալք . . . :

(Մատուցի յատաջ)

Պ. Թ.

### ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՄԵՄԾ

ՅԵՏ ԱՆՑԱՆԵԼՈՅ ԸՆԴ ԾԱՎՆ ԿՈՐՄԻՐ

Հըռչակ հարցուք զգօրութենէ եւ ըզփառաց բարձրելոյն ,  
Որ վասըն մեր վառեալ ի զէն զիւր ըզբազուկն ազատարար՝  
Դրոշմեաց ըզբէն վրիժուց ի ծակատու բըռնաւորին .  
Ընկլուզին ալիք ծովու ըզհալածին խրայելի :

Մատեաւ Ամենակալն առ հոյակապ պատերազմիկս ,  
Եւ առաջնորդ լինէր մեզ նըստեալ ի կառս իւր բոցելէնս .  
Առընթեր զնային նըմա մահ եւ սոսկումն անհնարին ,  
Եւ բազուկ նորա զինեալ վառէր ի շանթ վրէժիմընդիք :

Ի տես նորին զդողանի հարեալ խոռոշէր ծով ահարեկ .  
« Քացցիք , ալիք , » ասէ նա . տայ հըրաման , եւ ետ ընդ ետ  
Մոլնչեն ալիք , պատառին չուրբ եւ կան կախեալր ի ծովու .  
Պատուարք երկու ի ծոցի անդ ամբառնան խոնաւակերտք .

Ընդ հովանեաւ Բարձրելցին երանեալ տոհմն Խսրայելի  
Խաղայ յառաջ ի գնաց խաղաղ՝ ընդ ճանապարհն ընդ այն նոր՝  
Յընչաց քերեալ զհալածումն անազորոյն Փարաւոնի ,  
Եւ բըռնաւորն անծամբ անծին ըզգերեզման իւր փորէ :

« Ընդ մէջ ալեաց , » ասէ նա , « Հերթայեցին հորդէ շաւիդ .  
« Այլ ընդ նո՞յն ճանապարհ բացան կառաց իմոց ուղիք .  
« Կալայց ըզնա , մեռամբ իմով բուռն զորսոյն հարից անդրէն ,  
« Եւ գերին փախաստական արկիցի շըղթայս միւսանգամ : »

Զայս ասէ , եւ ի ծոց անդրբ ծովուն ամբոխելոյ  
Սուրայ կառօք . ահեղ գոչմամբ սլանայ ըգնետ Եգիպտացին .  
Այլ վրէժ թինու քոյ , ո' Տէր , պընդէր զկընի զօրաց նորա՝  
Ճանդերծեալ առ ընկըզմել զնոսին ի մութն յաւիտենից :

Քո շունչ բարկացայտ , որպէս մըրբիկ երազաւաց ,  
Շընչէ անդէն յալիս զուրց , որ մնային քում հրամանի .  
Լեառնըն ջրեղէն , կամակատար ի զործ մահու , տատանեալ  
Ցուզեալ ծփանօր անկանի՛ վայր , եւ ոչ եւս էր Փարաւոն :

Որպէս վէմ , ի խստաշունչ շընչել հողմոց , հատեալ ի բաց  
Յանմատոյց լերին միոյ ի բարձրայօն կատարէ ,  
Թաւալազոր անկեալ ոստմամբ ի շառաչին իմն ահազին ,  
Խորասոյզ ի խորս ծովու անհետ ի սպառ եղեւ յաշաց :

Աջ քո , Տէր , ած ի յայտ ըզգօրութիւն իւր ահաւոր ,  
Աջ քո հարուածս ած ի վերայ ահազնազոյնս սաստիկ յոյժ .  
Ժողովուրդն այն պատժապարտ վրէժ անհնարին ետ քեզ , Տէր ,  
Եւ քո շունչ հըրաշունչ խանճեաց զնոսին ըսպառլսպուռ .

Ո՞վ , քանի՛ մեծ ես , Աստուած , յերեսաց քոց սարսեալ երկիր  
Դողայ լրին , զողան երկինն յահէ քումէ զերկիւղ սուրբ .  
Բնութիւն եւ ժամանակ զինել իւրեանց քեզ պարտին ,  
Եւ առանց քո շողան ոչ պայծառագեղ աստեղը երկինց :

Այլ էք ինչ զրայ առնել մերում երկայնածիգ զերութեան ,  
Կամ դոյզն ինչ էք առնուլ ըզգիէժ ի թըշնամեաց մերոց սիզաց ,  
Արդ կամիս եւ լինել մեզ առաջնորդ յերկիրն յուռթի  
Զոր խստացեալ էք գութ սիրոյ քոյ զաւկացըն Յակոբայ :

Ո՞վ կարէ կալ առաջի ժողովլըրեանն Խսրայելի .  
Տէր ուազից առ ի լինել նըմին պաշտպան՝ ի գէն ի զարդ  
Վառեալ ածէ ի հանդէս ըզգօրութիւն իւրոյ բազկի ,  
Եւ հրեշտակ իւր սատալիչ զընայ նորին առաջոյ :

Մուրնչէ Մովաք զայրազին , եւ ծարաւիք արեան քում ,  
Ամաղէկ եւ Քանան , մոլեալ անձին քում ի խընդիր՝  
Թերեն սրեն ըզուտեր , եւ ձեռք նոցա մարդախոշշը  
Ցառաջազոյն դարբնեն երկաթս առ ի նըկուն առնել զքեզ :

Տես , Տէր , զիա՞րդ խոռովի յոյս խուժանին կորուսելոյ .  
Ազգդ այդ մարտիկ խառնազանճ , առաջնորդեալ ի զայրըցաց ,  
ի տեսիլ քո մահարեր դարձին անդէն ի փախուստ ,  
եւ անուն քո՞նդ հանուր արկցէ երկիւղ եւ արհաւիրս \*


Հաստատեա , Տէր , զգմեզ անդ ի վերայ սըրբոյ լերին .  
Եջ , աղէ , եւ ուսու մեզ զաստուածեղէն օրէնքս քո ,  
Զի եւ մեր ի սիրու խոնարհ , պատկառ նըմին կացեալք ահիւ ,  
Ցայտ արացուք ազգաց մարդկան՝ եթէ դու ես Աստուած մեր :

Կո՞յն ինքն ես դու . այդու անուամբ քո բարութիւն հայրական  
Պաշտպանէ զորդիս որդուց Աքքահամու եւ Յակոբայ .  
Թո՞ղ ապա Խորայէլ , Երկըրպազու հաւատարիմ .  
Քեզ եւեթ ընծայեցէ զիտւնկս օրինութեանց եւ զուխտ իւր , Տէր :

Հըռչակ հարցուք զզօրութենէ եւ ըզփառաց Բարձրելոյն ,  
Որ վասըն մեր վառեալ ի զէն զիւր ըզբազուկն ազատարաք՝  
Դրոշմեաց ըզքէն վրիժուց ի ճակատու բըռնաւորին .  
Ընկլուզին ալիք ծովու ըզհալածիչն Խորայելի :

ՍԱՀԿ

8. Գ.



## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԸՆՏԻՐ ՀԱՏԱՇՈՑ

Ե Ղ Բ Ա Բ Ք Ե Բ Կ Ո Ւ

Երկիր հերկեալ էր երեւեմն երուսաղէմ . Եղբարք երկու  
ստացեալ ունէին զմասն երկրին այնորիկ յորում կանգնեալ  
կան այսօր տաճարին շինուածք . մին յեղբարց անտի էր ա-  
մուսնացեալ , և էին նորա մանկունք բազումք , և մեւսն կեայր  
առանձինն . զործէին ի միասին զանգն զոր ժառանգեալ էր  
նոցա ի մօրէ իւրեանց : Եկին աւուրք հնձոց , և եղբարքն եր-  
կորին կապեցին զորայս իւրեանց , և արարեալ նոքօք շեզմ  
երկուս հաւասարս՝ թողին ի վերայ դաշտին և չոքան : Ի մէջ

գիշերի որ ամուրին էր յեղբարց անտի՝ եղ ի մտի իւրում խորհուրդ ինչ բարի . ասէ նա իւրովի . Այր կանամքի է եղբայր իմ և ունի մանկունս ի ոնուցանել . չեն իրաւունք ունել մեզ բաժին հաւասար միմեանց : Երթայց առից ի շեղջէ իմմէ որայս ինչ և յաւելից ի շեղջ նորա գաղտ . մի՛ լիցի լւրագեկ եղբայր իմ և մերժիցէ զնոսա : Եւ արար որպէս եղեալն էր ի մտի : Ի նմին գիշերի յարուցեալ միւսոյ եղբօրն ասէ ցկին իւր . Երիտասարդ է եղբայր իմ , կեայ առանձինն և ամուրի , չիք ոք որ օգնեսցէ նմա յաշխատութեան նորա և մսիթարեսցէ զնա ի վաստակս . չէ յիրաւի առնուլ մեզ ի հասարակաց անդէ մերմէ բաժին հաւասար նորայումն . յարուցեալ տարցուք ի շեղջ նորա որայս ինչ յաւելուլ ի ծածուկ . մի՛ լիցի վաղիւ զգալ եղբօր իմում և ի բաց մերժել զնոսա : Եւ արարին որպէս զիարդ և խորհեցանն : Ի վաղիւ անդր եղբարքն երկոքին չոքան ի դաշտն , և զարմացան յոյժ ի տեսանել զշեղջն երկուս որ կային ցանկ ի հասարակ չափու . ոչ մին և ոչ մեւսն կարէր հաւաստեաւ կալ ի վերայ սքանչելեացն : Օրինակ զայս արարին զրազում գիշերս . այլ զի իւրաքանչիւրն ի նոցանէ բերէր ի շեղջ եղբօր իւրոյ որայս զնոյն թիւ , շեղջքն երկոքին մնային միշտ հաւասարք , մինչեւ ի միւսոմ գիշերի սպասեալ յանցս ընկերին առ ի գաղտնեացն խելամուտ լինելոյ՝ գիշէին միմեանց , յորժամ բարձեալ բերէին զորայսն զոր պատրաստէին իրերաց փոխանակաւ :

Արդ , տեղին այն յորում խորհուրդս այս բարւոք յոյժ հանապազորդէր ի միւս արանց երկուց՝ լինելոց էր վայր հաճոյ Աստուծոյ . և մարդիկ օրհնեցին զտեղին և ընտրեցին շինել անդ տուն Աստուծոյ :

### Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ

Ի միջի անդ շղթայի միոյ լերանց է հովիտ մի անջրդիշ շուրջ պատեալ ի դեղնադոյն և ի կոսկուտ գագաթանց , որ յարեւելից եւեթ կուսէ բանան կիսով չափ առ ի տես ածել զանդունդս Մեռեալ ծովուն և զբացական լերինս Արաբա-

ցւոց աշխարհին : Ի միջոցի վիմուտ վայրացն այնոցիկ , ի վերայ դերբուկ և զառ ի թափ երկրի , ի քաղաքորմի անդ աւերելց երբեմն ի հարուածոց մանգղիոնի և ամրացելոյ աշտարակօք անկելովք , յակն անկանին մեծատարր բեկորք աւերածոց . նոճիք ցան և ցիրք , մացառք հալուէի և հնդիկ թղենոյ , խուղք ինչ արաբականք , հանգոյն սպիտակ շիրմաց , ծածկեն զկոյտս աւերակացն . այս է տխուրն Յրուսաղէմ :

Ի տեսիլ երկրիս այսորիկ լքելոյ՝ զառաջ ինն տաղտուկ մեծ ունի զսիրտ մարդոյ . այլ անցեալ մեր ի մենութենէ ի մենութիւն՝ միջոց անեզր տարածեալ պարզի առաջի աշաց մերոց , և փարատի ձանձրոյթն առ տակաւ տակաւ . երկիւղ իմն գաղտնի ընդ որով անկանի այր ուղեւոր՝ չեւ բեկեալ զհոզի նորա՝ տայ նմա խրախոյս և բարձր առնէ զհանձար : Տեսիլք նորանշանք առաջի առնեն յամենայն կողմանց երկրը մի լի սքանչելեօք . անդ է տեսանել զարեգակնն կիզիչ , զարծուին կատաղի , զիոնարհ զրպայն , զմնցրին երկնաբերձ , զանպտուղ թղենին , զբովանդակ բանաստեղծութիւն , և զամենայն պատկերս Ս. Գրոց . ամենայն անուն ունի յինքեան խորհուրդ ինչ , մէն մի փասլար ի յայտ ածէ զհանգերձեալս , կատարք իւրաքանչիւր հնչեն ի բարբառ ուրուք ի մարդարէից : Աստուած ինքն խօսեցաւ ի տեղիս անդ . ուղխօք ցամաքեալք , ապառաժք հերձեալք , շիրիմք կիսարացք վկայեն վասն սքանչելեացն : Անապատն այն թուի դեռ համի առահի , որպէս այն թէ չիշուէ խուղել զլուութիւնն , յորմէ հետէ լուաւ զձայն Յաւիտենականին :

---

Հատածդ փոքրիկ որ զինի՛ ի զրոց Տելեմաքայ է . այլ աղաչեմք , մի՛ ինչ տարցին ընդ միտ եւ մի եպեր զմեւը շփիցեն՝ թէ իշխեալ է եւ մեր զմիանզամ թարզմանեալն հանել միւսանզամ ի հայ առանձինն ինչ զիտաւորութեամբ : Դիտաւորութիւն միր այն եւեթ է՛ զան յանձին առնուլ ըստ մերում կարի վասն բարեր ի կիր արկաներյ լեզուին յոր պէտս եւ իցէ . այլ թէ հատած մի եւս ի զրոց Տելեմաքայ ընտրեցաք , այն մեզ է զիտեի , զի ոչ կարէ ոք նստել դատաւոր ճաշակի այլոց , նա՛ եւ ոչ մարթի ասել

Թէ չիր եւ ոչ լիցի այնպէս հայերէն հարազատ կամ յօրինուած ազնուազոյն քան զոր ածեն ի հանդէս Խարզմաննալը առ ափամբք Անդրին անդընդոց :

Թէ ԿԵԱՆՔ ՄԱՐԴՈՅ ԸՆԹԱՆԱՆ Ս.Ր.Դ.

Անցանեն մարդիկ իբրև զծաղիկս որ փթթին յառաւօտու , և թարշամեալ ընդ երեկոս՝ կոխան ոտից արկանին : Ազգք մարդկան սահին որպէս զալիս արագընթաց գետոյ . ոչինչ կարէ տալ զկայ առնուլ ժամանակին , որ ձգեալ տանի զհետ իւր և որ ինչ կարի անշարժականն թուի : Դու իսկ , որդեակ , որդեակ իմ սիրելի , դու իսկ որ վայելեսդ այժմիկ ի տիս մանկութեան կայտառ և լի հաճոյիւք , կալ ի մոի զի հասակդ այդ առոյդ նման է ծաղկի որ ընդ երեւելն անդէն թառամիցի . տեսցես զանձն քո այլակերպեալ յանզգայս . շնորհք զուարթագինք , հաճոյք քաղցրագոյնք քեզ ընկերակիցք , և զօրութիւն և առողջութիւն և ուրախութիւն , փարատեսցին իբրև զերազ գեղեցիկ . ոչ ինչ յայնցանէ մնասցէ քեզ բայց յիշատակ տրտմագին . ծերութիւն տառապեալ և թշնամի հաճոյից խորչոմն արկցէ յերեսս քո , կորացուացէ զթիկունս քո , տկարացուացէ զանդամն , ցամաքեցուացէ զաղբեւր խնդութեան ի որտի քում , տացէ քեզ տաղոկալ ի մօտաւորէն , երկնչել ի հանդերձելոյն , և անզգայ յամենայնէ արասցէ զքեզ բաց ի վշտաց :

Ժամանակս այս թուի քեզ հեռի . եղո՛ւկ , խարիս դու , որդեակ իմ . վաղվաղէ նա , աւասիկ հասանէ . որ ճեսլէն այնպէս արագ՝ չէ հեռի ի քէն , և ժամանակս այժմու որ խուսափի՝ արգէն իսկ է կարի հեռագոյն , զի ի խօսել մերում դառնայ յոշինչ , և չէ մարթ թէ մերձեսցի միւսանդամ : Մի երբեք , որդեակ իմ , վստահ ի մօտաւորն լինիր . այլ պահեա զանձն քո ի խիստ և ի դժուարին ճանապարհս առաքինութեան՝ գէտակն կալեալ հանդերձելոյն : Պատրաստեա քեզ անրիծ բարուք և սիրով արդարութեան՝ տեղի մի յերանաւէտ օթելանս խաղաղութեան :

# ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

## ՀԱՅԵՐԻ ԾԵՆ ՀԵՋԱՀԻ

**Դ**

ԴԵՄ ՑԱՆԳԻՄԱՆ . տես զԴԵՄ ԸՆԴ ԸՆԴԴԵՄ : \*Տեսի  
զԱՍՈՒԱՃ դէմյանդիման : — \*Ամաչեն դէմյանդիման գալ  
մարդկան : — \*Եղեն դէմյանդիման պատերազմել ընդ նմա :  
Կամ՝ առջեւը . դէմացը : \*Դարձյին բանակեսցին դէմյան-  
դիման հանգրուանին : — \*Ուրախ լինէր ժողովուրդն դէմյանդի-  
ման սրբոցն զամիսս երիս : — \*Կործանեաց դէմյանդի-  
ման իւր զեղանս բահաղիմայցն :

ԴԵՊ ԼԻՆԵԼ . ՏԱԼ . հանդիպիլ . պատահել : \*Դէպ եղեւ քա-  
հանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ : — \*Դէպ եղեւ եղ-  
բարս եւթն . . . ածել յատեան թագաւորին : — \*Դէպ լինէր  
ընդ ամենայն քաղաքն զաւուրս քառասուն երեւել ընդ եր-  
կինս և ընդ երկիր : — \*Որ ինչ դէպն տացէ՝ կարգեսցեն  
հասարակ հաւանութեամբ , և հաստատուն կացցեն : — \*Եթէ  
դէպ տուաւ :

Ի ԴԵՊ Ե . յարմար Ե . իւ չայէ : \*Ի դէպ էր Ագամայ ասել՝  
թէ . . . գոյր այլ Աստուած յորժամ զիողն խնդրեցեր : —  
\*Ի դէպ էր ինձ անսալ ձեզ : — \*Զի՞նչ ի դէպ իցէ այս ա-  
ռաջնոր բանիցն :

Կամ՝ կարելի Ե . ներեւու : \*Ի դէպ է՝ թէ անդ դանակք  
էին վասն գառին : — \*Ի դէպ է թէ բազում անգամ և տկա-  
րանային :

Ի ԴԵՊ ԳԱԼ . ԵԼԱՆԵԼ . յարմար ժալ : \*Եկեալ ի դէպ նոյսա  
ճշմարիտ առակին զգօնութեան՝ եթէ Շուն գառնայ անդրէն  
ի փսխած իւր : — \*Ասացեալ բանս ի փրկչէն՝ առ երկոսին ի  
դէպ գայ : — \*Ի դէպ ելանէ նոյսա աստուածական բարբառն :  
— \*Կառք Աստուծոյ բիւրապատիկք և հազար ուղղիչք ի Տէր  
մեր Յիսուս Քրիստոս ի դէպ ելանեն :

ԴԵՊ ԵՒ ԴԵՊ . շար յարմար . ուեղն ի աւելը : \*Առ իւրաքան-  
չիւր բանիցն դէպ և դէպ զվճիռ դատաստանին մատուցանել :

ԴԵՊ ՈՒ ԴԵՊ . աննարի աչք . շետքի : \* ԴԻԱՊՈՒԴԻԱլ նկատեալ . . . տեսցեն :

ԴԵՊՈՒԴԻԱլ . աղջուկի . չե՞ շետքի : \* Ելեալ ի Տրովադայ՝ դէպուդիլ գնացաք ի Սամոթրակի :

ԴԵՏ ԼԻՆԵԼ . ԱՌԱՆԵԼ . դիտել . առ դնել : \* Յամենայն կողմանց դէտ յանձին ինքնին լինիցին : — \* Ամպքն յոչինչն ուստի եկեալ էին՝ դէտ արարեալ դառնային :

ԴԵՏԱԿՆ ՈՒՆԵԼ . աշադրութեամբ նայել . հեռաւեն դիտել . սպասել : \* Ամենայն ժողովուրդն դէտակն կալեալ . . . հայէին ընդ Մովսէս : — \* Մայրն Սիսարայ հայեցեալ դէտակն ունէր ի վանդակապատ պատուհանէն : — \* Դիտակն կալջիր ի վերայ այնոցիկ որ առնեն զհերձուածս : — \* Այլ և զայն դէտակն կալջիր՝ զի նուազեալ անկան : — \* Դիտակն ունէին (իւ սպասէին) թշուառութեան տեսլեանն , որ ընդ այգն ընդ առաւօտն ի վերայ հրէից սպառնացեալ պահէր : — \* Դիտակն ունել ճանապարհացն (ճամբուն սպասէլ )

ԴԵՏԱԿՆ Ի ՎԵՐ ԱՄԲԱՌՆԱԼ . Ի ՎԵՐԱՑ ԴՆԵԼ . աշու վր վրյունել նայել . դիտել . առ դնել : \* Յայնմ վայրի դէտակն ի վեր ամբառնայր Եղիազար : — \* Քննեա , և դէտակն ի վերայ դիցես :

ԴԻՊԱՆ ԵԼԱՆԵԼ . ՊԱՏԱՀԵԼ . դէմ ելել կրաւելը : շրմաւել : \* Պատեհ է դիպան ելանել զօրացն Յունաց : — \* Յառաջ խաղալ , առ դիպան պատահել զօրացն Պարսից :

ԴԻԻՐ ԱՌԱՆԵԼ . հանդսութենիւն՝ դիւրութենիւն դալ : \* Դիւր արարի նոցա ի կապանացն :

ԴԻԻՐ ԼԻՆԵԼ . հանդսութենիւն՝ դիւրութենիւն ըլլըլ : \* Եղիցիր ի հասանել ի վերայ քո այսոյն չարի որ յԱստուծոյ , երգեսցէ քնարաւն և դիւր լիցի քեզ , և հանգուսցէ զքեզ :

ԴՆԵԼ ԱՐԱՑ . արտասուրել . ըստաւել : \* Եղ ի նմա արատ խեղութեան :

ԴՆԵԼ ԶԱՒՐՏ . հոգ ընել . սէրու կոտրել . լուսնել : \* Եթէ փախչիցիմք , ոչ դիցեն ի վերայ մեր զսկրտս . և եթէ կիսոյ կէս ի մէնջ մեռանիցիմք , ոչ դիցեն ի վերայ մեր զմիրտ :

ԴՆԵԼ Ի ՄՐՏԻ . խորհել . արածել : \* Ոչ ընդ հուպ արարի հատուցանել , զի ոչ գոյ մարդ որ դնէ ի սրտի :

ԴԱՆԵԼ ԶԱՆՁԱՆ . ՔԵՐԻՆԸ ԳՐԵԼ . ԱՊԱՆՆԵԼ : \* ԱԱԵՆ ՄԱՆ (ցՄիքա) ՈՐԴԻՔՆ ԴԱՆԱՅ . ՄԻ ԼՈՒԽԻԳԻ ՃԱյՆ ՔՊ զԼՆԻ մԵՐ , ԳՈւցէ պատահիցեն քեզ արք . . . և գնիցեն զանձն ՔՊ և զանձն տան ՔՐՅ :

ԴԱՆԵԼ ԶԱՆՁԱՆ ԻՎԵՐՍՏ . ԿԵՊԱՆՔ ՀՐԱՆՔԻ ՋԵՂ ՇՆԵԼ ( Ա-ՇԵՆ համար ) : \* ԶԱՆՁԱՆ ԽՄ ԽՍԿ ԵԳԻԳ Ի ՎԵՐԱՅ ՔՊ :

ԴԱՆԵԼ ԽՈՇՀՈՒՐԴ ՅԱՆՁԻՆ . հԱՄԱՊԱՐ ՔՆԵԼ ԽՊՐԻՆ ԹԵՂ : \* ՆԱ (Եղիազարոս) դԵՂԵԳԻԼ ԽՈՐԴՈՒՐԺՄ . . . յանձին ԵԳԵԱԼ . . . արագ արագ առնէր զՊԼԱՏԱՍԽԱՆԻՆ :

ԴԱՆԵԼ ԳԻՒՐԾ . ԽԱՊԵՆԱՌԴԵԼ : \* ԳԻՒՐՍ դԵԿՐ յԱՃԱԽՄԱԳՊՅՆՄ : Ի ԴՈՂԻ ԿԱԼ . ԶԴՈՂԱՆԻ՝ ԶԴՈՂՄԱՆ ՀԱՐԿԱՆԻՄ . ԴՊՊԱԼ ( ՀՄԻԵՆ : ) \* ՀԱՆԱՎԱՋ Ի ԴՊՂԻ և յԵՐԵՐԻ կԱՅԵՋ : — \* ԻԲՐԵԼ Ե-ՄԵՍ ՄԱՏՈՎԹԻ . . . ԵՐԻԿԱՄՈՒՆՔ իւր դՊՊՂԱՆԻ հԱՐԱՆ : — \* ՅԱՆԼԱՐԺԱԿԻ հԱՐԱՎ զՊԼՈՐՄԱՆ :

ԴՈՒԼ ՏԱԼ . ԴՊՊԱՐ՝ հԱՆՔԻՄՊ ՊՄԼ : \* ՀԱՅՐ ՔՊ . . . ոչ տայ դՊՆԼ զՈՐՈՒՆ : — \* ՄԻ ԼՈԵՐ . . . մԻ ՄԱՐ դՊՆԼ աԼԿԱՆ ՔՊՈՒՄ յԱՐ-ՄԱՍՈՒՏԱԳ :

ԴՈՒԼ ԵՒ ՊԱՏՈՒԷՐ ՏԱԼ . յԵՐԴԱՐ՝ ԴԿՅԻ ՊՄԼ : \* ԴՈՒԼ և պատ-ուէր տամ ամենայն ումեք : — \* ԴՈՒԼ և պատուէր տայր նո-ցա երթալ միւսանգամ ի հարիւրն :

Ի ԴՈՒՐԾ ՏԱԼ . ԵՊ ՊՄԼ՝ ԴՊՊՅԱՆԵԼ : Արդ տուք ի դՊՆՐՍ զՔԱ-ՊՂԱՔ և զԳԱԼԱԽԱ և զԿՈՂԲԱՆԱ : — \* ՈՀ ոք էր որ ասէր՝ թէ տուր ի դՊՆՐՍ ( զԱԼԱՐԻՆ : )

ԴՈՒՇ ՏԱԼ . ԲՊՊՅԱՆԵՄՄԲ ՀՐԱՅ ՀՄԵՆԼ՝ ՊԵՂ ԽԵՆ ԴԵ ԴԻՎԼ : \* ԴՈՒԿ ԵՄՈՒՔ խուռնընթաց դիմեալ : — \* ԱԱԼԵՆԵՔԻՆ դՈՒԿ ԵՄՈՒՆ յԱՆԱՎԱՄՈՒՆ :

ԴՄՐՈՎ ԱՌՆԵԼ . ՀՄՐ ԱՌԻՆԵԼ . + ամահիւէԼ : \* ՈՀ զՃԵՐՍ դՄՐՈՎ առնելց վասն ասեմ զՊՄՅ , այլ զՊԼԿԻՄ :

ԴՄՐՈՎ ԼԻԽԵԼ . + ամահիւէԼ . մԵՂՄՐՅԱ-ԷԼ : \* ԲԱՄԲԱՍԵԳԱՆ և դՄՐՈՎ ԵՂԵԼ :

Յ. Գ.

(ԿԱՏԱՐԱՄ « Դ » ՆՇԱՆԱԳՐԻ)

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԳԻՄԻՄ

Յ. ԳՈՒՐԳԻՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

## ՊԱՅՄԱՆՔ

---

Ա. Գին միամերայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախսք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել ալարտ է , յանուն լինամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփի Գավաֆեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքմաքճըլար .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :

---

Վ. Ր Ւ Պ Ա Կ Ք

Էջ	Տող	Վարիպակ	Ուղիղ
141	31	Մամիկոնեան	Մամիկոնեանց :

---

۴۰۸۰۶۱

۶۷۰۴۶۹۰۸

معارف نظارت جلیله سنك ۹۱۰ نومروی رخصتناهه سیله طبع او نشدر